

Ս. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
ԼԵԶՎՈՒՄ

Գրապայքարի ծավալման տւ հաղթական ավարտման գործում Մ. Նալբանդյանը բացառիկ դեր է կատարել. նա գաղափարական ղեկավարն ու բոցաշունչ մարտիկն էր այն պայքարի, որն անցյալ դարի 50—60 թթ. առաջավոր հայ մտավորականութիւնը մղում էր նոր լեզվին քաղաքացիական իրավունքներ տալու, աշխարհաբար գրականութիւն ստեղծելու ու, դրանով իսկ, այն ազգի լուսավորութեան գործիք դարձնելու համար:

Աշխարհաբարը առաջադիմական հզոր մի ուժ էր դարձել, մի սուրսայր գործիք, որը պետք էր օգտագործել խավարամտութեան, ֆեոդալիզմի մնացուկների և առհասարակ ամեն հնի ու ռեակցիոնի դեմ մղվող պայքարում: Ելնելով սրանից, Նալբանդյանը և գրական աշխարհաբարի մշակման հյուսիսսփայլյան ուղղութեան կողմնակիցները ոչ միայն տեսականորեն էին աշխարհաբար գրական լեզվի պատմական անհրաժեշտութիւնն ու իրավունքները պաշտպանում, այլև գործնականում անձնապես մասնակցում էին աշխարհաբար գրականութեան ստեղծմանը, ընտրում լեզվական այս կամ այն ձևը, մշակում, օգտագործում ու պաշտպանութեան տակ առնում իրենց նորամուծութիւնը բազմաթիվ հակառակորդների շարամիտ հարձակումներից: Աշխարհաբարի մշակման ու հարստացման համար Նալբանդյանը օգտագործում էր ինչպես աշխարհաբարի ներքին հնարավորութիւնները, այնպես էլ գրաբարի, օտար լեզուների ու բարբառների իրողութիւնները: Եթե օտար լեզուները միայն փոխառու բառերով, օճերով կամ հասկացութիւններով էին մասնակցում մեր ազգային գրական լեզվի հարստացմանն ու մշակմանը,

ապա գրաբարը, որպես նախորդ դրական լեզու, և բարբառները, որոնք 50—60 թթ. ժողովրդական լայն մասսաների համար որպես խոսակցական ու երբեմն որպես գրական լեզու էին ծառայում, աշխարհաբարին էին տալիս ոչ միայն բառային, այլև քերականական բազմաթիվ իրողություններ: Բարբառային իրողությունները աշխարհաբարի մեջ էին մտնում և՛ գրական ճանապարհով, և՛ կենդանի խոսքի միջոցով, էլ չենք խոսում այն մասին, որ շատ շատերը, առանձնապես աշխարհաբարի մշակման հյուսիսափայլյան ուղղության մեղավորական հակառակորդներից, նույնիսկ 60-ական թվականներին՝ իրենց աշխարհաբարի կողմնակից համարելով, աշխարհաբարի, որպես ընդհանուր լեզվի գոյությունը չէին ընդունում և կոչ էին անում այն մշակելու փոխարեն զարկ տալ տեղական բարբառներով դրականությանը: Եվ եթե 50—60 թթ. «Հյուսիսափայլը» միակ պարբերականն էր, որը տեսականորեն պաշտպանում էր աշխարհաբարը ինքնուրույնաբար (առանց ստրկանալու գրաբարին և տեղական բարբառներին) մշակելու գաղափարը ու իր էջերը ամբողջովին նվիրում էր այդ տեսության իրագործմանը, ապա այդ գործում Մ. Նալբանդյանը բացառիկ դեր է կատարել: Այս հոգևածում մենք կփորձենք ցույց տալ, թե ի՞նչ տեղ են գրավում բարբառային իրողությունները Մ. Նալբանդյանի լեզվական գործունեության մեջ, ինչքանով օգտագործելի էին համարվում դրանք տեսականում և գործնականում՝ իր իսկ (Նալբանդյանի) լեզվական պրակտիկայում: Քննարկումը կկատարենք ըստ նրա լեզվի երեք շրջանների՝ 1. 1845—50 թթ. (նախահյուսիսափայլյաճ շրջան). 2. 1857—62 թթ. (հյուսիսափայլյաճ շրջան). 3. 1863—66 թթ. (հուսիսափայլյաճ շրջան):

1845—1856 թթ. Մ. Նալբանդյանի համար գրական աշխարհաբարի համակարգի շուրջ կատարած որոնումների մի շրջան է: Քիչ գրավոր վավերաթղթեր են հասել մեզ այդ շրջանից՝ անձնական նամակներ և բանաստեղծությունների հայտնի տետրակը, որի լեզուն Մ. Նալբանդյանի բնութագրմամբ «նոր լեզվի տղայության հասակի հիշատակարանք» են միայն:

Հասկանալի է, որ ո՛չ բանաստեղծությունների տետրում եղած նյութերը և ո՛չ էլ մանավանդ անձնական նամակները հրատարակության համար նախատեսված չեն եղել: Նրանց լեզվի ուսումնասիրությունը մի նպատակ ունի միայն՝ պարզել, թե ի՞նչ տեղ էր տալիս Մ. Նալբանդյանը իր գործունեության նախապատրաստական էտապում նախ՝ տեղական բարբառներին առհասարակ և ապա՝ բարբառային քերականական ու բառային իրողություններին:

Մ. Նալբանդյանի ձեռքով գրված առաջին վավերաթղթերը, որոնք հասել են մեզ, բարբառային ուժեղ խառնուրդ ունեն. խոսքը «Հիմարաց ուսման վրա ունեցած կարծիքը» բանաստեղծության (որը գրված է 1845 թ. ու, ինչպես հայտնի է, տպագրվել է Նալբանդյանի ուսուցիչ՝ Գ. Պատկանյանի «Արարատ» թերթի 1851 թ. ապրիլի 21-ի համարում) և 1849 թ. հունվարի 7-ին իր եղբայրներին՝ Գրիգոր և Ղաղարոս Նալբանդյաններին ուղղված նամակի մասին է։ Ե՛վ բանաստեղծությունը, որի լեզուն համարյա չի տարբերվում «Արարատի» լեզվից, և՛ նամակը այդ շրջանի աշխարհարարի ընդհանուր վիճակի նալբանդյանական արտահայտություններ լինելով, իրենցից ներկայացնում են Նոր-Նախիջևանի՝ Մ. Նալբանդյանի մայրենի բարբառի, գրաբարի և աշխարհաբարյան ձևերի մի խառնուրդ՝ բարբառային ձևերի գերակշռությամբ։ Եթե նամակում բարբառը, անշուշտ, եղբայրներին հասկանալի լեզվով գրելու ցանկությամբ է պայմանավորված, ապա բանաստեղծության մեջ գրաբարի, բարբառի և աշխարհաբարի օգտագործումը, անկասկած, գալիս է Նալբանդյանի ուսուցչից՝ Գ. Պատկանյանից, որի «Արարատ» թերթի լեզուն, ինչպես ճիշտ կերպով նկատել է դեռևս Նազարյանը, «չէ այս պարսաւելի, բայց անկանոն յոյժ և խառն ընդ գրոցն ոճոյ, այլև յաղթահարեալ ի տեղական բարբառոյ...»¹։

Նշված փաստաթղթերում բարբառային են. սահմանական ներկան (որոշ դեպքերում)՝ «ի՞նչ քո անձդ մանուկ մատաղ կշարչաբես նաֆիլե», «կուզես ըլլալ», «Աղատ աստված մեզ ստեղծեց, կասեն կելլան ման կուզան» (ԵԼԺ, 1,18). որոշ հոլովաձևեր՝ սեռական, տրական և բացառական, ասու հնարը (ԵԼԺ, 4,10), ինչու է պետք, մեզի, ամենուն, մեզիմեն (ԵԼԺ, 1,18), Նաւա, հոսեն, հոնեն (ԵԼԺ, 4,11). այլ քերականական ձևեր տւ բառեր՝ պոշ, ըլլալ, չի ածեր, առեր, փորերնիս (ԵԼԺ, 1,18), չի գնացածին համար, դիծար. Բալել, չիմ գալ (ԵԼԺ, 4,10—11) և այլն։

Սակայն լեզվական այն որակը, որ «Նալբանդյանի լեզուն» ենթկողում, Նոր-Նախիջևանի շրջապատում չձևավորվեց։ Ինչպես հայտնի է, խուսափելով հալածանքներից 1853 թ. Նալբանդյանը մեկնեց Մոսկվա։ Այդտեղ էլ՝ Լազարյան ճեմարանի, մոսկովյան ու պետերբուրգյան հայ ուսանողական շրջանների ու հայկական առաջավոր մտավորականության շրջապատում ձևավորվում է նրա լեզուն։ Այգ-

¹ Ստ. Նազարյան, Ցաղագս փորձական հոգեբանութեան ճառ, 1851 թ., էջ 7-8։

ոեղ նա հղկում, մշակում ու կտկում է իր լեզուն՝ առաջին հերթին բռնաթափելով այն բարբառային ձևերից:

1851—1855 թթ. մեզ հասած բանաստեղծություններն ու նա- նակաները վկայում են, որ Նալբանդյանը Մոսկվայում առմիշտ հրա- ժարվեց բարբառային գրական լեզվի իր նախորդ փորձերից: Դա աշխարհաբարի մշակման նրա տեսության ու պրակտիկայի հետա- գա բախտը վճռող առաջադիմական խոշոր քայլ էր:

Մ. Նալբանդյանի լեզու, սակայն միաճգամից չձևավորվեց. 1851—1855 թթ. աշխարհաբարի մշակման Նալբանդյանի փորձերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ շրջանը նրա համար եղել է պրպտումների, որոնումների մի ժամանակամիջոց՝ առանձ- նապես գրական աշխարհաբարի համակարգի, նրա հարստացման հիմնական աղբյուրների շուրջը:

Բարբառային ի՞նչ իրողություններ էր նա պահում իր այդ շըը- ջանում գրած բանաստեղծությունների ու անձնական նամակների մեջ:

Մ. Նալբանդյանը հոլովներից սեռականը և տրականը, որոշ դեպքերում՝ բանաստեղծությունների մեջ ու առավել շատ՝ նամակ- ներում, կազմում է մայրենի բարբառի ձևով՝ բառերը ենթարկում է ու հոլովման:

Օրինակ՝ արևու երես (ԵԼԺ, 1,33), ամենուն կտամ (ն. տ., 29), հասունացել քրոջներուս (ն. տ., 34), շատ բարև աղջիկներուն ն. տ., 35), կուտա ուրիշներուն (ն. տ., 41):

Եթե ներգոյականը մեջ կապական ռառով է կազմվում, նշված ձևը պահպանվում է (Նախիջևանու մեջ—ն. տ., 40):

Բացառականի—էն վերջավորությամբ ձևերը նույնպես մեծ մասամբ նամակներում են առկա:

Օրինակ՝ գահէն (ԵԼԺ, 1,33), աղայէն (ԵԼԺ, 4,24), համբավ- ներէն (ն. տ.) և այլն:

Բարբառային դերանուններ օգտագործվում են ինչպես բա- նաստեղծություններում, այնպես էլ նամակներում (դուն, ինծի, ձեզի, քեզի— ԵԼԺ, 4,32, էն— ԵԼԺ, 1,24, քու— ԵԼԺ, 1,27, մեզի (ն. տ., 36), բայց և՛ ինձ (ԵԼԺ, 4,32), քո (ն. տ.):

Մեծ թիվ են կազմում (առանձնապես նամակներում) այլ բար- բառային բառաձևերը:

Նշենք մի քանիսը՝ կենե միամիտ չեք (ԵԼԺ, 4,24), հարկադրե- ցինք նե (ն. տ., 34), սովբեցնում է, սովբելու (ն. տ., 33) սովբց- նում է (ն. տ., 60), կատղած, ուղբել (ն. տ., 36) և այլն:

Տվյալ շրջանի աշխարհաբարի համար ընդհանուր հատկանիշ-

ներից է ը որոշիչ հոդի գործածությունը բացառական, գործիական ու ներգոյական հոլովածների հետ (-իցը, -ովը, -ումը): Այս երևույթը Նալբանդյանի լեզվի նախորդ շրջանից մեզ հասած երկու փաստաթղթերում, որոնց մենք անդրադարձանք, առկա չէ, բացառությամբ մեկ դեպքի, որտեղ ը-ն, ըստ երևույթին, հանգի համար է ավելացված:

Մեր գիտցածը մեզի կօգնե, թե հավատքի զորությունը, Եկեղեցի ավետարան ամուր պահենք մեր մտքումը: (ԵԺԺ, 1, 18), 1853—55 թթ. ը հոդի գործածությունը նշված հոլովների հետ սովորական է:

Օրինակ՝ բացառականի հետ՝ շատիցը, քչիցը (ԵԺԺ, 1, 21), սերմիցը (Ն. տ. 23). գործիականի հետ՝ միջնորդութենովը (ԵԺԺ, 1, 21). որդովը (Ն. տ. 26), հոգովը (ԵԺԺ, 4, 40). ներգոյականի հետ՝ մասնավորումը (ԵԺԺ, 1, 21), դարումը, տակերումը (Ն. տ., 23):

Քանի որ խոսք եղավ հոգերի մասին, նշենք նաև նամակներում և հոդի բարբառային գործածության առկայությունը վրա և համար կապերի խնդիրների հետ՝ Ավտուշին համար (ԵԺԺ, 4, 35), գլխուն վերա (Ն. տ., 33):

Մեկ-ի փոխարեն մին բառի օգտագործումը ևս ժամանակի աշխարհաբարի համար բնորոշ է: Նալբանդյանն էլ, որպես կանոն, մին է օգտագործում:

Օրինակ՝ մին մինի հետքից (ԵԺԺ, 1, 59), տրացողներից մինը (Ն. տ., 26), ամեն մինը (Ն. տ.), մին մինից հեռանալով (ԵԺԺ, 4, 41):

Ուշագրավ է մի հանգամանք: Նկատվում է, որ եթե Նալբանդյանը՝ այս շրջանում իր հարազատներին գրած նամակներում գերազանցապես մայրենի (նոր-նախնիականի) բարբառի իրողություններն է օգտագործում, ապա բանաստեղծություններում դրանք փոխարինում է կա՛մ «ում» ճյուղի բարբառներին հատուկ ձևերով, կա՛մ ժողովրդական-աշխարհաբարյան ձևն է դնում, կա՛մ էլ՝ երկուսը միասին:

Հմտ. օրինակ՝ «Մինն ալ բավական է» (ԵԺԺ, 4, 17), մին էլ կտրեց (ԵԺԺ, 1, 59), համբավներէն (ԵԺԺ, 4, 24), սերմիցը (ԵԺԺ, 1, 23), օտարներու (ԵԺԺ, 4, 32), ամպերի, փոթորիկի (ԵԺԺ, 1, 36):

Նշենք նաև, որ այս շրջանի նամակներում, առանձին դեպքերում, օգտագործվում է արևմտահայ ներկա՝ «... Զարմանալի է, որ գուն ինքդ՝ ինձի ձեզի մոռացող համարելով՝ քեզի միշտ սիրով ցույց կուտաս ու կասես...» (ԵԺԺ, 4, 32):

նամակներում կան նաև ժխտականի կազմության բարբառային առանձին օրինակներ (պատճառն է... շի գտնվելն, ԵԼԺ, 4, 17)։

Զպետք է կարծել, թե նկարագրված հատկանիշները միակերպ հատուկ են ինչպես 40 թթ. կեսերին, այնպես էլ 50—56 թթ.։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նալբանդյանի 1855—1856 թթ. լեզուն զգալիորեն տարբերվում է ոչ միայն 40 թթ., այլև 1855 թ. ի մի հավարած բանաստեղծությունների տետրի լեզվից։ Այսպես, եթե, ասենք, Նալբանդյանի 1849 թ. հունվարի 7-ի նամակը հիմնականում բարբառային է, ապա 1856 թ. մարտի 2-ի Անանիա Սուլթանշահին ուղղված՝ «Հյուսիսսփայլի» հրատարակման իր և Ստ. Նազարյանի ծրագրերի մասին հաղորդող նամակում միակ շեղումը 1857 թ. լույս տեսած «Թափառական հրեա»-ի թարգմանության առաջին մասի լեզվի համեմատությամբ, որի հյուսիսսփայլյան լինելը ոչ ոք չի վիճարկել, վեճերու և ֆանի մը (ԵԼԺ, 4, 39), ձևերն են, որոնք գալիս են մայրենի բարբառից¹։

Հարկավոր է ուշադրություն դարձնել մի այլ հանգամանքի վրա ևս, 1851—1856 թթ. նամակներում բարբառային ձևերի օգտագործման տեսակետից էվոլյուցիան ուժեղ չէ։ Դրան հակառակ, երբ վերցնում ենք բանաստեղծությունների տետրի 1855 թ. գրված որոշ բանաստեղծություններ (α18 փետրվարի 1855», «Հոգևարք», «Վեցերորդը մի շնար», տեսնում ենք, որ դրանց մեջ բարբառային ձևերը բացառություններ են (ֆեզի— ԵԼԺ, 1, 48, մտիկն՝ «գտնվում էր տան մտիկն»²— ԵԼԺ, 1, 53), իսկ α18 փետրվարի 1855 թ.՝ մեջ չկան առհասարակ, Սրա հետ միասին առանձին բանաստեղծություններում բարբառային իրողություններ բավականին շատ կան։

Օրինակ՝ «Պաղեստինու ոստ»-ում ունենք՝ Հոգևանանու, աբևու, ֆեզի, ձեռքովը, կողքովը (ԵԼԺ, 1, 37—38)։

Անցումը «Հյուսիսսփայլի լեզվին» Նալբանդյանի մոտ նախապատրաստվեց հենց այս շրջանում. բարբառային իրողությունների օգտագործման տեսակետից այդ նշանավոր էր նրանով, որ Նալբանդյանն աստիճանաբար իր լեզվից դուրս է մղում բարբա-

¹ Ա. Սուլթանշահին ուղղված հետագա նամակներում բարբառային ձևերը որոշ չափով շատանում են, այսինքն՝ Նալբանդյանը իր և Սուլթանշահի միջև ստեղծված ոչ պաշտոնական, բարեկամական հարաբերությունները նկատի ունենալով սկսում է խստությամբ չլերարեբլել լեզվական ձևերի ընտրությանը։ Այս հանգամանքը պետք է հաշվի առնել Նալբանդյանի նամակների լեզուն գնահատելիս։

² Սա հանգի համար է՝ «...ծառաները ասացին, ...որ գտնվում էր տան մեջին» (ԵԼԺ, 1, 53)։

ռային քերականական ու բառային ձևերը: Այսպես, օրինակ, երբ համեմատում ենք թափառական հրեա-ի առաջաբանը 1855—1856 թթ. բանաստեղծությունների և նամակների հետ, տեսնում ենք, որ՝

1. Գրական լեզվից դուրս են մղվել մայրենի բարբառի հետ կապված բայաձևերը, ոճերը, հոլովական ձևերը և դրանց փոխարեն օգտագործվել արևելյան աշխարհարարի կամ գրաբարյան իրողություններ:

Պահպանվել են միայն, փառի մի (Եժ, 2,61) և կես մի (ն. տ. 67) կապակցությունները, որոնք առանձին դեպքերում օգտագործվում են նաև հետագայում՝ «Հյուսիսսփայլում».

2. Դերանունների՝ նախորդ էտապում գործածվող գրաբարյան, բարբառային և աշխարհաբարյան ձևերից հաղթանակող են հանդիսանում գրաբարաձևերը, ինչպես՝ սոփա (Եժ, 2,63), մեհ (ն. ա., 67)¹.

3. Մ. Նալբանդյանը անհրաժեշտ է գտնում հրաժարվել 1851—1856 թթ. իր օգտագործած ժխտականի ժողովրդական-աշխարհարարյան, բարբառային և գրաբարյան ձևերից և բոլոր դեպքերում օգտագործում չէ:

Օրինակ՝ չէ կարող սնանվել (Եժ, 2,63), պակաս չէ (ն. տ., 64), չէ կատարվում (ն. տ.), չէ կարողացել (ն. տ., 67):

Իր լեզվի «Հյուսիսսփայլան» կոչվող շրջանում (1857—62)² Նալբանդյանը որոշակի վերաբերմունք է մշակում գրական աշխարհաբարը բարբառային փոխառություններով հարստացնելու հարցում: Սա պայմանավորված էր աշխարհաբարի մշակման հյուսիսսփայլյան ուղղության ընդհանուր սկզբունքներով, որոնք հանգում էին հետևյալին (բարբառների օգտագործման հարցում). աշխարհաբարը նոր, գրաբարից ու բոլոր բարբառներից տարբեր լեզվական որակ է. աշխարհաբար ասելով պետք է հասկանալ ոչ թե «մի քաղաքի մասնավոր կամ մի երկրի հատկացյալ բարբառ», այլ «այն հստակ հայախոսությունը, որ կարելի էր հասկացվել և ամենայն տեղ գտանված հայերից»³: «Գավառական լեզուները» չեն

¹ Հետաքրքրական է, որ մեհ ձևը 1851—1855 թթ. բանաստեղծություններում չի գործածվում, բայց առկա է նամակներում՝ մեհ պետք է (ն. տ., 35), մեհ ամենեքյան (ն. տ., 41):

² Այս շրջանը, ինչպես երևում է, չի համընկնում «Հյուսիսսփայլ» ամսագրի հիմնադրման ու փակման ժամանակի հետ (1858—64), այլ հյուսիսսփայլյան է կոչվում լեզվական որակը նկատի ունենալով:

³ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 410—411:

կարող համազգային լուսավորության ընդհանուր գործիք դառնալ, ապառճառ որ այն կոշտ ու կոպիտ լեզվովը ոչինչ մարդավայել աղ-նիվ միտք, մանավանդ ուսումնական խնդիրների վերա, չէ կարելի բացահայտել¹։

Նման հարցադրման ճշտությունը ակնհայտ կդառնա, եթե նկատի ունենանք, որ «Հյուսիսսփայլը» խնդիր էր դնում մշակելու գիտական տեղեկանքով հագեցված կուռ ու հայերենի մեջ աամե-նայն եվրոպական գաղափար թափելու հնարավորություն տվող «լուսավար» կապակից պարբերություններով² հարուստ մի լեզու։

Մեր բարբառները այդ տեսակետից օգտակար չէին կարող լի-նել։ Նրանք չունեին գիտական մշակված տեղեկանքություն։ Հյուսիսսփայլյան շրջանում նախնայանք գտնում էր, որ բար-բառները «Հյուսիսսփայլին» գիտական լեզու մշակելու գործում որևէ օգուտ տալ չեն կարող, քանի որ հնարավոր չէ «վերին կամ՝ գեղեցիկ մտքերը» շարադրել «անկապ ու կցկտուր լեզվի ձե-վերովը»³ (տեղական բարբառներով)։ Նման դեպքերում, «Հյուսի-սսփայլին» «գրիչը» դիմում էին կա՛մ օտար լեզուներին, կա՛մ էլ գրաբարին։ Բարբառայնությունը, դեպի ուր քաշում էին աշխար-հաբարը «Մեղու Հայաստանի» որոշ գաղափարախոսներ, նախ-բանդյանը հյուսիսսփայլյան շրջանում գրական լեզվի համար հիմ-նական վտանգն էր համարում, և դրանով է հենց պայմանավոր-վում այն խիստ պայքարը, որը մղում էր «Հյուսիսսփայլը» ազգա-յին դրական լեզուն բարբառի աստիճանի իջեցնելու ամեն մի փոր-ձի դեմ։ «Հյուսիսսփայլում», բարբառներից, որպես դրական լեզվի հարստացման աղբյուրից, օգտվելու հարցն անգամ չի դրվում։ Այդ չի նշանակում, սակայն, որ «Հյուսիսսփայլյան» շրջանի նախնադ-յանի լեզվում բարբառային ձևեր չկան։

Բարբառային ի՞նչ ձևեր էին օգտագործվում նախնայանի լեզվում 1858—1862 թթ. և ի՞նչ էվոլյուցիա ապրեցին նրանք։

Ժամանակի աշխարհաբարի մշակման մյուս ուղղությունների հետ համեմատած, նախնայանի լեզվում 1858—1863 թթ. բար-բառային իրողությունները չափազանց սահմանափակ տեղ են գրա-վում։ Դրանցից ամենակարևորը «ը» որոշիչ հոդի գործածությունն է բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ, որը հատուկ է ոչ միայն նախնայանին, այլև այդ շրջանի գրական աշ-խարհաբարին առհասարակ։

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 411։

² «Հյուսիսսփայլ», 1858, № 1, 79։

«Հյուսիսսփայլի» հեղինակներից ամսագրի հիմնադրման շրջանում բացառականի հետ ամենից քիչ ը որոշիչ հոգ է օգտագործում Նալբանդյանը (հեղինակիցը- հ, 1,79, ազգիցը, գարեհանդիցը- հ, 5,380 և այլն)։

Անհամեմատ ավելի շատ են գործիականի հետ հոգի օգտագործման դեպքերը, ըստ որում —ալֆյուն ածանցով կազմված համարյա բոլոր բառերը, որպես կանոն, այդ ձևով են հոլովվում, իսկ դրանց քանակը «Հյուսիսսփայլում» առանձնապես շատ է (տգիտութեամբը- հ, 1,73, ձևերովը- հ, 1,79, ազգասիրութեամբը- հ. 2,153, դրութեամբը- հ, 5,378, գործադրութեամբը- հ. 5,400, լեզուովը- հ, 5, 269 և այլն)։

Ներգոյական հոլովի հետ որոշիչ հոգի գործածությունն ունի այն առանձնահատկությունը, որ ընդգրկում է բոլոր համապատասխան դեպքերը (թիֆլիզումը- հ, 1,72, մտքումը- հ, 2,149, սենեկումը հ, 4,344, առաջևումը հ. 5,377, ապագայումը- հ, 6,505)։

Արդեն 1858 թ. կեսերին հոգի գործածությունը բացառականի հետ Նալբանդյանի լեզվում նվազագույնի է հասցված, ի տարբերություն «Հյուսիսսփայլի» մյուս հեղինակների 1858 թ. վերջերին (ամսատետրակ 10) Նալբանդյանը բացառականի վրա որոշիչ հոգ դնում է մասնակի դեպքերում, այն էլ՝ ուրիշների նմանությամբ։ Այսպես՝ բանավիճելով Մ. Իսահակյանի հետ, որը գործածում է «Մասյաց գարեհանգիցը», Նալբանդյանը որպես անուղղակի խոսք օգտագործում է այդ կապակցությունը մե'րթ հոդով, մե'րթ առանց հոգի 1859—1860 թթ. բացառականի հետ հոգ չի գործածվում։

Գործիականի հետ ը որոշիչ հոգ դրվում է մինչև 1859 թ. վերջերը. 1860 թթ. այս հոլովի հետ ևս հոգ չի դրվում։

Այլ է ներգոյականի վիճակը։ Ընդհանրապես նկատվում է, որ 1859—1860 թթ. այդ հոլովի հետ ավելի քիչ դեպքերում է որոշիչ հոգ օգտագործվում, քան 1858 թ., սակայն այդ չի հանգեցնում Նալբանդյանի լեզվից այդ ձևի դուրս մղմանը, և 60 թ. էլ նա առանձին դեպքերում ներգոյականը ը հոդով է դնում (վերջումը- հ, 59, 5,379, սկզբումը- հ, 59, 8,659, յատակումը- հ, 59, 10,812, դաշտումը- հ, 60, 5,382, ձեռներումը, փողոցումը- հ, 59, 10,814)¹։

¹ Մեր նկարագրած էվոլյուցիայի տեսանկյունից երբ անդրադառնում ենք «Հյուսիսսփայլի» 1859 թ. 10-րդ և 11-րդ ամսատետրերում տպված և Մ. Նալբանդյանին վերագրվող նամակներին, տեսնում ենք, որ դրանց լեզուն նշված էվոլյուցիայից շեղվում է։ Բանն այն է, որ եթե մինչև «Հյուսիսսփայլի» 1859 թ. 8-րդ ամսատետրը, օրինակ, ներգոյական հոլովի հետ հոգի գործածությունը աստիճանաբար,

1861—1862 թթ. Նալբանդյանը բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ ը որոշիչ հոգ չի գործածում:

Բարբառային մյուս՝ տվյալ շրջանի աշխարհաբարում շատ տարածված ձևը մին բառն է, որը դրվում է մեկ (հազվագյուտ՝ ձև է) և մի բառերի փոխարեն (որոնցից մինը— հ, 1,77, մին բանի վերայ— հ, 4,343, բարեկամներից մինի հետ— ն. տ., 344, մինը— նրե, 373, մինի— ն. տ., 372, ամեն մինի— ն. տ., 458):

Նկատվում է, որ Նալբանդյանի հյուսիսափայլյան շրջանի ստեղծագործություններում որպես կանոն մի և մեկ բառերի մին ձևն է օգտագործվում, երբ՝

1. Նախադասության մեջ առկա է մյուս դերանունը (դուրս գալով մինից մտանում է միսի մէջ— հ, 10,302, ընդունել մինը՝ ն մերժել միսը— նլժ, 2,308):

2. Կապվում է բացառական հոլովով դրված լրացման հետ՝ օրինակ՝ հրատարակողներից մինը— (հ, 59,2, 166), քաղաքներից մինն է (հ, 59, 8, 651), անդամներից մինի վերա (նլժ, 2,302), բարեկամներից մինի նամակը (հ, 60, 3,387):

Դերանուններից, հազվագյուտ դեպքերում, դու—ի սեռականը քու ձևով է օգտագործվում (քու տեսութեանը— հ, 4,342): Առանձին դեպքերում ու հոլովման է ենթարկվում սեռ բառը (սիրու ախտով— հ, 59,9,727): Բարբառային ձևով են կապվում և ոչ ոք դերանվան առանձին ձևեր (ոչ ով սիրտ չունի— հ, 11, 428): Ով դերանվան սեռականը, տրականն ու հայցականը ևս նշված շրջանում Նալբանդյանը բարբառային ձևով է կապում (ովին են խաբում— հ, 8,166): Երբ իրար կողքի ով դերանվան սեռական և տրական ձևեր են ընկնում, երկրորդը սովորաբար ավանդական ում ձևով է դրվում (ովի ում հետ խոսելու վերայ է իմ կասկածը— հ, 10,343): 1859 թ. առանձին դեպքերում, ով դերանվան սեռականի ովի կամ ում ձևերի փոխարեն ուր հարաբերականի սեռականն է դրվում (ուր և ուր¹ ձեռքում գտանվում է— հ, 59,5,382):

Նույն ձևերը առկա են նաև 1861—1862 թթ. գրած աշխատություններում:

Օրինակ՝ ուրի ընդդեմ (նճն, 406), ովի բան տւ գործը կտրվել է (ն. տ., 442):

Նվազում է, ապա 10-րդում և 11-րդում այն մեծ տոկոս է կազմում: Անմիջապես դրանից հետո՝ 1860 թ. նորից հոգի գործածության դեպքերը նվազագույնի են հասնում:

¹ «Հյուսիսափայլում» տարածված ձև. հմմտ.՝ ուրի համար կացուցած են— հ, 59, 1, 15):

Գլուխ բառի հետ միասին 1858—1860 թթ. սեռականում որպես զույգ ձև օգտագործվում է գեղ- (գեղի մեջ- հ, 7,79, գեղերի- հ, 60,5 388), 1860—62 թթ. ունենք նաև այլ դեպքերում (գեղ, ՆԸԾ, 410, գեղացի, ն. տ., 411):

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երկու կարևոր հանգամանքների վրա:

ա) Մ. Նալբանդյանի քննարկվող շրջանի ստեղծագործություններին, ինչպես և առհասարակ 1858—1866 թթ. գրական աշխարհագրին, հատուկ են հոլովման ու հնչյունափոխության բազմաթիվ՝ աշխարհագրի մեր էտապի համար անսովոր ձևեր, «Հյուսիսափայլի» կողմնակիցների մոտ այդ «շեղումները», որոնք հաճախ կատարվում էին ի հակադրություն արդեն գործուն օրենքների, կապվում էին գրական լեզվի օրենքները համընդհանուր դարձնելու ձգտման հետ:

Այսպես՝ «Հյուսիսափայլում» ի հոլովման էին ենթարկվում նաև՝

1. Տրադիցիոն կերպով ներքին ա հոլովման ենթարկվող առանձին բառեր, ինչպես՝ արյունի (հ, 8,152), գուռնից (հ, 7,73), քուռիս (ն. տ., 78), առունին (հ, 59,9,813), հատուցումի (եվթ, 2, 304), հոլովումի (եվթ, 3,344):

2. Մարդ¹ և ընկեր բառերը (մարդերի- հ, 8,149, Թ, 53 մարդի- եվթ, 2,404, ընկերի աչքից- հ, 59, 11, 909, ընկերին- եվթ 2,410, Թ2, 20):

Մյուս կողմից, ժամանակ ցույց տվող բառերը արդեն իսկ 60-ական թվականներին հիմնականում վա հոլովման էին ենթարկվում: «Հյուսիսափայլը» այդ օրինաչափությունը չէր ընդունում ու այդ բառերի մի զգալի մասը ի, իսկ շատ բառեր ու հոլովման էր ենթարկում:

Օրինակ գիշերի (հ, 9, 246), օրիդ (հ, 10,340), օրից (հ, 11,418), եվթ, 2,287, ցերեկի (հ, 59,11,904), բայց և՛ առավոտու, ժամուն (հ, 59,11,902), տարու (ՆԸԾ. 528):

Այնուհետև, միավանկ ու և ի արմատահնչյուն ունեցող բառերի թեքման և հոգնակի կազմելու ժամանակ Մ. Նալբանդյանը հետեւելով հյուսիսափայլի ընդհանուր սկզբունքներին, հնչյունափոխություն չէր կատարում. այդ գործում զգալի դեր է կատարում արևմտահայ գրականի (թերևս նաև մայրենի բարբառի) ազդեցությունը:

¹ Հաղվագյուտ բացառություններով:

Այսպես օրինակ՝ միտքները (հ, 59,1,69), տունները- հ, 8,148. սիրտները (հ, 59,10,811), խումբին (եժԺ, 2,294), թուրի (նԸԵ, 520). սուտին (նԸԵ, 511) հմմտ. գրատունից (Թ, 23):

Բերված օրինակների զգալի մասը ցույց է տալիս, որ «շեղումները» 60-ական թթ. գործուն օրինաչափություններից՝ հօգուտ աշխարհարարի ընդհանուր օրենքների, նրանց համընդհանուր դառնալու ձգտման, հօգուտ լեզվի ժողովրդային ոգու է կատարված: Այդ ձևերի որոշ մասը այժմ բարբառային է, բայց 60-ական թվականներին որպես այդպիսին չի գիտակցվել և այդ պատճառով էլ օգտագործվել է «Հյուսիսսփայլում» ու, քիչ տարբերությամբ, նաև Նալբանդյանի լեզվի ետհյուսիսսփայլյալ շրջանում:

բ) Առանձին քննության խնդիր է արևմտահայերենի իրողությունների օգտագործման հարցը: 58—60 թթ. դրանք դեռևս շատ չեն Նալբանդյանի ստեղծագործություններում (բացառիկ դեպքերում ներկան՝ ձեռնկանայի, որ ամեն հոգևորականը, որոնք որ արեղայական բառին տակ կը պախարակվին, պատասխան տային- հ, 59,1,78, ինչպես և մի քանի բայաձևեր ու քերականական իրողություններ՝ չի ուզեր, ձեռքերնին ունին, բառին տակ- հ, 59, 1,78, հինցած- եժԺ, 2,307, վերցնել ձվերացնել- ն. տ., 310)¹: Սակայն 1861—1862 թթ. «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատություններում արևմտահայ գրականի (թերևս Նալբանդյանի մայրենի բարբառի) իրողությունները զգալիորեն ավելանում են:

Բերենք մի քանի օրինակ՝ մի մոռնաֆ (նԸԵ, 404)², հասկանաֆ (ն. տ., 407), վաստրկել, հանչցիր (ն. տ., 415), ազգին վերա (հ, 62, 5, 235), անձին վերա (նԸԵ, 367), մասին համար (ն. տ., 407), օգտին համար (ն. տ., 445), չվառ (ն. տ., 379), այժմեն (ն. տ., 380), աղփառներուն (ն. տ., 406) և այլն:

Վերոհիշյալ ձևերի մի զգալի մասը, ինչպես ցույց է տրված հոգվածի ակզրում, առկա է և գրական աշխարհարարի մշակման ուղղությամբ Նալբանդյանի կատարած որոնումների շրջանում, սակայն այստեղ, մեր կարծիքով, գործ ունենք ոչ թե բարբառային իրողություններով հյուսիսսփայլի մշակած գրական աշխարհարար հարստացնելու Նալբանդյանի ձգտման, այլ երկու գրական լեզու-

¹ Նույն շրջանի նամակներում արևմտահայ ձևեր ավելի շատ են օգտագործվում, բայց նամակները լեզվական տեսակետից վատահետի չեն, քնավ նախատեսված չեն եղել հրատարակելու և նրանց լեզվի նկատմամբ Նալբանդյանը խստապահանջությամբ հանդես չի բերել:

² Հմմտ. մոռնալով... մոռցա՞ր... չեմ մոռցր (ն. տ., 414):

ների միահյուսման միայն բանտում ձևակերպված թեզի գործնական իրագործման առաջին արտահայտությունների հետ, Այս տեսանկյունով էլ պետք է մոտենալ այդ իրողությունների գնահատմանը, որոնք առանձնապես շատ են 1863—1866 թթ.:

Ո՞րն է ընդհանուր եզրակացությունը: Իր լեզվի հյուսիսփայլյան շրջանում (1858—1862 թթ.) Նալբանդյանը բարբառները որպես գրական աշխարհաբարի հարստացման աղբյուր չէր դիտում: Նրա լեզվում առկա բարբառային իրողություններից երկուսը (քորոշիչ հոդի օգտագործումը բացառական, գործիական ու ներգոյական հոլովների հետ և մին բառի գործածությունը) ընդհանուր են ժամանակի աշխարհաբարի համար առհասարակ, իսկ մնացածները միայն եզակի բացառություններ են:

1862—1866 թթ., Նալբանդյանի լեզվի վերջին՝ ետհյուսիսփայլյան կոչված էտապում նոր վերաբերմունք է մշակվում գրական աշխարհաբարի հարստացման հիմնական աղբյուրի վերաբերյալ: Բանտում Նալբանդյանը ձևակերպում է իր այն եզրակացությունը, որ կարելի է թերևս սահուն գրել նաև «Հյուսիսփայլի» մշակած աշխարհարարով, բայց այն «խորթ կլինի ժողովրդին, որովհետև այդ սահունագրության տարրերը կենդանի լեզվից չեն վերցված, այլ՝ հնի, մեռածի դարավոր ավերակներից, կպցրած են ապրած ախտեմի ազդեցությամբ...»¹,

Ի՞նչը բերեց Նալբանդյանին նման եզրակացության: Ոմանք հակված են գերազնահատելու Նալբանդյանի բանտային շրջանի գործունեության դերը այդ շրջադարձում՝ գտնելով, որ Նալբանդյանը այդ եզրակացությանը հանգեց բանտում աշխարհաբարի մշակման տարբեր նմուշներն ուսումնասիրելու հետևանքով. առանձնապես շեշտվում է այն, որ Նալբանդյանը պահանջել ու ուսումնասիրել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» և Պ. Պոռոջյանի «Սոս և Վարդիթեր» վեպերը: Տվյալ դեպքում մոռացության է տրվում այն հանգամանքը, որ Նալբանդյանը «Սոս և Վարդիթերի» լեզուն համարում է «...Աշտարակի բարբառը, որով գրված է գործի բնագիրը...», ըստ որում նա այդ կատարված է համարում հատուկ խորհրդով՝ «...և հեղինակը ուզելով (է) իր Գործը այդ բարբառով գրել, որ կարդացողը... նորա լեզվի վրա էլ տեղեկություն ըստանա...»²,

«Վերք Հայաստանի»-ի լեզուն ևս նա բարբառ է համարում, արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքից բավականին տար-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 194 (թարգմ.):

² Նույն տեղը:

բերվող խոսվածքներից մեկը, Հասկանալի է, որ այդ աշխատությունները գրական լեզվի մշակման նախնական սկզբունքներին բնավ համապատասխան չլինելով («որքան կարելի է առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել»)², չէին կարող վճռական դեր խաղալ նշված շրջադարձում: Բոլորովին այլ բան է ասում ինքը՝ Նալբանդյանը: Խոսելով «Հյուսիսսփայլի» մշակած աշխարհաբարում գրաբարյան տարրերի առատության և «կենդանի լեզվի» իրողությունների պակաս լինելու մասին, հարց դնելով առավել ժողովրդայնացնել աշխարհաբարը՝ Նալբանդյանը ավելացնում է. «... Տասնամյա փորձը այս ասպարեզում (աշխարհաբարի մշակման—Ս. Դ.), չփումը ժողովրդի հետ՝ բոլորովին տարբեր կողմերում, մեզ բերին վերոհիշյալ փրկարար գիտակցությանը», Նշանակում է, որ նման եզրակացության համար հիմք են ծառայել ոչ միայն նրա բանտային շրջանի ուսումնասիրությունները, այլև գրական աշխարհաբարի մշակման Ստ. Նազարյանի և իր 1853—1863 թթ. միջև ընկած տասնամյա փորձն ու շփումը ժողովրդի հետ:

Բանն այն է, որ չփոխելով բնավ իր վերաբերմունքը բարբառների նկատմամբ, որպես գրական աշխարհաբարին փոխարինելու անընդունակ լեզվական որակների, Նալբանդյանը, ի փոփոխումն հյուսիսսփայլյան շրջանի փր սկզբունքների, գտնում է, որ անհրաժեշտ է գրական աշխարհաբարի մշակման գործում օգտագործել «բոլոր գավառական բարբառների վեական տարբերք»: Եթե հյուսիսսփայլյան շրջանում նա կարծում էր, որ կարելի է պահպանել լեզվի ժողովրդայնությունը առանց բարբառները, որպես գրական լեզվի հարստացման աղբյուր, օգտագործելու էլ, ապա 1863—1866 թթ. գտնում է, որ «... մինչև բոլոր գավառական բարբառներից ճամփաներ չբացվեն դեպի գրական լեզվի կենտրոնը, սա... չէ կարող ծաղկել և ուժ առնելով հանրական խորհուրդ ունենալ ազգի համար»¹: Սրանով Նալբանդյանը բարբառային գրական լեզվի չի ձգտում բնավ, ինչպես կարող է առաջին հայացքից թվալ («էական տարբերք», «...գրական լեզվի կենտրոն...»): Նրա կարծիքով գրական աշխարհաբարի մեջ պետք է մտցնել այն տարրերը, որոնք «իրենց ձևով ու կազմությամբ ավելի ընդունակ են կենդանի ընդհանրություն լեզվի վրա պատվաստվելու»: Այդ, ըստ Նալբանդյանի, կարող է կատարվել միայն մի ճանապարհով. «պատվաստվելու ընդունակ» բարբառային տարրերը պիտի ընկնեն ճարտարապետ հեղինակների քուրայի մեջ և այնտեղ հալվելով և քիմիա-

¹ Ս. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 213—214:

բար (Ֆիզիկաբար ոչ) միանալով պիտի դուրս գան ոչ որպես թլպատութիւն կամ անթլպատութիւն, այլ որպես նոր արարած¹։ Իսկ այդ նշանակում է, որ բարբառները առաջին պլան են մղվում, դառնում են գրական աշխարհաբարի հարստացման հիմնական աղբյուր։ Այս տեսութիւնը ընկալ նախանշանի հետ հյուսիսափայլյան շրջանի լեզվական պրակտիկայի հիմքում։ Ի՞նչ գործնական հետեւանքների հասցրեց դա²։

ա) 1863—1866 թթ. վերականգնվում է -ը՝ որոշիչ հոդի գործածութիւնը բացառական, գործիական ու ներգոյական հոլովների հետ, սակայն այլ համամասնությամբ, քան 1858—60 թթ. էր։

Ի տարբերութիւն 1858—1860 թթ., երբ ամենից շատ որոշիչ հոդ էր դրվում ներգոյական, ապա՝ գործիական ու բացառական հոլովների վրա, այս շրջանում առավել շատ որոշիչ հոդ է օգտագործվում բացառական հոլովով բառերի հետ, ապա՝ գործիականի և ամենից քիչ՝ ներգոյականի։

Օրինակներ՝ բացառական. Գրերիցը (նլժ, 2, 406), քամակիցը (ն. տ., 397), սեռիցն (նլժ, 186), մեկիցն, գլխիցը (ն. տ., 531), ինչիցն (ն. տ., 251), գրածիցը (թ, 16), գրչիցն (թ, 23) և այլն։

Գործիական. Առաջնորդությամբը (նլժ, 2, 405), գրքերովը (ն. տ., 500), առաջնովը, երկրորդովը (ն. տ., 537), վանքովը (թ, 2) և այլն։

Ներգոյական. Աչքումը (նլժ, 2, 405), կարգումը (ն. տ., 408), դրսումը (նլժ, 537)։

բ) Բարբառային բառերի օգտագործում

1. 1863—1866 թթ. շարունակվում է մին բառի գործածութիւնը, այն տարբերությամբ, որ որոշ փոքրաթիվ դեպքերում այն փոխարինվում է մի կամ մեկ ձևերով։

Օրինակ՝ հիվանդանոցներից մինի մեջ (նլժ, 485), գյուտերից մինն (ն. տ., 489), բարեկամներից մինը (ն. տ., 259), նոցանից մինը (թ, 11), մինն հին, ... իսկ մյուսը թարմ (նլժ, 2, 407)⁴։

¹ Մ. Նախանջյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 197—198, ընդգծումը մերն է—Ս. Գ.։

² Նկատի պետք է ունենալ, որ Նախանջյանի՝ բանառում գրած աշխատութիւնների մի զգալի մասը հեղինակի կողմից հրատարակության համար պատրաստված չի եղել։

³ Մասնակի դեպքերում նաև «ն», որը հիմնականում բացառական հոլովի վրա է դրվում։

⁴ 1863—1866 թթ., երբ նման կապակցութիւններում կռվից կապական բառն է օգտագործվում, դրվում է մեկ՝ «Գառ ու քարոզես մեկ կռվից նորա դեղեց՝ կռվումը մյուս կռվից...» (նլժ, 584)։

2. Գեղ: Եթե 1858—1862 թթ. այն գրվում է որպես զույգ ձև գյուղ-ի հետ միասին, ապա 1863—1866 թթ. գեղ-ը դառնում է միակը ինչպես արմատական, այնպես էլ բաղադրյալ ձևերում՝ գեղերից (ՆԸԵ, 492), գեղացիների (Ն. տ.), գեղը (թ, 29):

3. Նույն կերպ 1863—1866 թթ. օգտագործվում է նաև եղ բառը, ըստ որում, եթե որոշ դեպքերում այդ ձևի առկայությունը դրանով կազմված ասացվածքների գործածությամբ կարելի էր բացատրել (օրինակ՝ «հալած եղի տեղ կընդունի»), ապա և բազմաթիվ այլ դեպքերում եղ բառը հանդես է գալիս հեղինակային խոսքում՝ ...եղ կտա... (ՆԸԵ, 583), եղ ծախելու (Հ, 64, 3, 165):

4. Բոլորովին նորություն և նախնադասի լեզվի 1858—1862 թթ. զարգացման տեղեկությունների տեսակետից օտարոտի է 1863—1866 թթ. բոլոր դեպքերում. այդտեղ բայի էրել ձևի օգտագործումը: Այդ բառը գործածվում է և՛ «կրիտիկայում», և՛ լեզվաբանական աշխատության պատառիկներում, և՛ Փարպեցու «Թղթի» թարգմանության մեջ:

Օրինակ՝ էրված (ՆԸԵ, 484), էրվեցան, էրվել (Ն. տ., 492), չէրեր (Ն. տ., 588), էրվելուց (թ. 33):

5. Բազմաթիվ են նաև այլ՝ հատկապես Վոս և Վարդիթների «Կրիտիկայում» օգտագործված բարբառային բառերն ու ձևերը՝ նանփով (ԵԼԺ, 2, 385), իսկի (ՆԸԵ, 483, թ, 18), տասնումի (ՆԸԵ, 484), հեաի (Ն. տ., 487), հավոդ (Ն. տ., 536), հիմի (Ն. տ., 555, 580), անկան (Թ., 17), անկաջին (ՆԸԵ, 543), եզեր (Հ, 64, 3, 165) և այլն, և այլն:

6. յուր դերանվան աշխարհաբարյան ձևերի հետ միասին 1863—1866 թթ. ի հայտ են գալիս նաև առանձին բարբառային իրողություններ.

Օրինակ՝ իրանգ, իրանց (ԵԼԺ, 2, 404, 405), իրեն անառակությունքը (ՆԸԵ, 563), իրանց (Ն. տ., 596):

Որոշ շափով տարածվում է և դու գերանվան սեռականի ֆու բարբառային ձևը (ֆու ազգի—ՆԸԵ, 555, հմմտ.՝ ֆու խոր գիտության վրա, Ն. տ., 558):

Ում իմաստով ուրի ձևի օգտագործումը ևս նշված շրջանին հատուկ է՝ ուրի համար առն համար» (Թ. 17), ուրի տունն ես հարցնում (ՆԸԵ, 558), ուրի գործն է կատարյալ (Ն. տ., 527):

Միաժամանակ Մ. Նախնադասը գործածում է ով գերանվան սեռականի ովի ձևը ում իմաստով (սեռական):

¹ Ունենք նաև՝ ճամփով (ՆԸԵ, 553):

Փարպեցու «Թղթի» թարգմանության ձեռագրում եղած մի փաստ ցույց է տալիս, որ վերջին օրինակը, բացառությամբ լինելով՝ Նալբանդյանի համար պատահականություն չէ, այլ որոշակի նպատակադրման արտահայտություն։ Բանն այն է, որ մի տեղ Նալբանդյանը նախ ձեռքի սովորությամբ ում է գրել, ապա շնչել և դարձրել ուլի՝ թե ուլի որդի էր (Թ, 51, ԵԼԺ, 3, 271), որը վկայում է ուլի ձևի գիտակցական օգտագործման մասին։

7. «Կրիտիկայում», բարբառի ազդեցությամբ, առանձին դեպքերում հոդ են ասանում որպես կապական բառ օգտագործված մեջ, առաջ, առջև և դուրս բառերը՝ ազգի կյանքի մեջը մտնել (ՆԸԵ, 542), ներկա լինելով դատարանի առջևը, ծունկ չոքում ձեր առջևը (Ն. տ., 515) և այլն։

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, բարբառային իրողությունները առկա են ինչպես այն աշխատություններում, որոնք որպես սևագրություն են մեզ հասել, այնպես էլ տպագրության համար հեղինակի կողմից վերջնականապես պատրաստ համարվածներում («Կրիտիկա»), ըստ որում վերջինների մեջ ավելի զգալի չափով։ Սրանից բխում է, որ լեզվի ժողովրդայնացման ուղղությամբ տեսական ճիշտ ուղիով ընթացող որոնումների շրջանում, Նալբանդյանը վերահիշյալ իրողությունները որպես գրական լեզուն բարբառների էական տարրերի հաշվին հարստացնելու միջոցներ էր դիտում։

Պետք է նկատել, որ լեզվի ժողովրդայնացման Նալբանդյանական այլ միջոցների ընդհանուր համակարգում դրանք առանձնապես մեծ տեղ չէին գրավում և գրական լեզվի պատմության հետագա ընթացքում, բնականաբար, դուրս մղվեցին։

Այսպիսով, Մ. Նալբանդյանի լեզվի նախահյուստիսափայլան, հյուսիսափայլան և ապա՝ ետհյուստիսափայլան շրջանում առկա բարբառային իրողությունները բոլորովին տարբեր նպատակներով են օգտագործված. նախահյուստիսափայլան շրջանի սկզբում դրանք գրական աշխարհաբարի մշակման ուղղությամբ կատարված որոնումների ընթացքում հիմնականում մայրենի բարբառի, իսկ վերջում նաև «ում» ճյուղին պատկանող բարբառների իրողություններն օգտագործելու փորձերի արդյունք են, հյուստիսափայլում՝ լոկ նախորդ շրջանի մնացորդներ, որոնք աստիճանաբար, բայց և հետևողականորեն արտամղվում են լեզվից, իսկ ետհյուստիսափայլան շրջանում բարբառային վերականգնված կամ նոր փոխառված իրողությունները՝ բարբառների վեական տարրերի հաշվին գրական աշ-

խարհաբարին առավել ժողովրդային ոգի տալու տեսության իրա-
գործման ուղղությամբ կատարված գործնական փորձերի արտա-
հայտություններն են:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ.—«Հյուսիսափայլ»

(Հ, 1, 73—«Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 73; Հ- 59, 5, 379—«Հյուսիսա-
փայլ», 1859, № 5, էջ 379).

ՔՀ.—Քափառական հրեա, թարգմ. Մ. Նալբանդյան, Մոսկվա, 1857:

Ք.—Ղազար Փարպեցու թուղթը: Մեղադրություն ստախոս արեղաներին:
Քարգմանությունք և բացատրությունք Մ. Նալբանդյանց. Ս. Պետերբուրգ, 1868:
ԵԺ.—Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, 1940—1949,
ԵԸԵ.—Մ. Նալբանդյան, Հետիւր երկեր, 1953:

С. А. ГАЛСТЯН

ДИАЛЕКТИЗМЫ В ЯЗЫКЕ М. НАЛБАНДЯНА

Р е з ю м е

В деле обработки и обогащения новоармянского литературного языка («ашхарабара») в 50—60-х годах прошлого столетия М. Налбандян использовал не только внутренние возможности самого ашхарабара, но и языковой материал древнеармянского литературного языка, иностранных языков и армянских диалектов. Исследование показывает, что диалектизмы М. Налбандяном использованы в соответствии с его теорией обработки ашхарабара.

В доюсисапайлский период (1845—56 гг.) диалектизмы в языке М. Налбандяна являются продуктами изысканий путей обработки литературного ашхарабара. Причем, в 40-х годах использован в основном родной М. Налбандяну ново-нахичеванский диалект (ветви «Կը»), а в 50-х г. также диалектные факты ветви «ուի».

В 1857—62 гг. (юсисапайлский период) диалектные явления, сохранившиеся еще в языке Налбандяна, постепенно и последовательно вытесняются из языка, в соответствии с общей программой журнала «Юсисапайл».

В послеюсисапайлский период (1863—66 гг.) часть диалектных фактов, вытесненных в предыдущем периоде, восстанавливается, появляются новые диалектизмы. Это прямое последствие новой постановки вопроса М. Налбандяном об использовании всех «существенных элементов» местных диалектов для обогащения литературного ашхарабара.